ՍՅՈՒՆՅԱՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Տ. Մ. ԱԼՀԱԿՅԱՆ

Հայկական բարձրավանդակի տեղաբնիկ ցեղերից մի քանիսը հնագույն ժամանակներից հաստատված են եղել պատմական Սյունիքի տերիտորիայում։ Մովսես Խորենացին հաղորդում է, որ ավանդական Դեղամ նահապետի որդի Սիսակը սիրում էր Դեղաքունի դավառից մինչև Արաքս գետն ընկած տարածությանը, որը նրա անունով կոչվում է «Սիսական» կամ «Սիւնիք», իսկ տոհմը՝ Սիսակյանց կամ Սյունյաց[1]։

Հիմնվելով Խորենացու վկայության վրա, Ստեփանոս Օրբելյանը ևս Սյունյաց տոհմի առաջացումը կապում է Սիսակի հետ և նշում, որ Սյունյաց նահապետությունը, սկսվելով Սիսակից, «հարազատությամբ որդիք զհարս փոխանակելով՝ հասին՝ ի նախարարութիւն»[2]։

Հայագետ Ն. Ադոնցը պատմական փաստերով հիմնավորել է, որ Սևանա լճի ավազանում հնագույն շրջանում ապրել է «դել» կամ «դեղ» անունով մի ցեղախումբ, որը հայտնի է դարձել Արտաշիսյան հարստության շրջանում և որ այդ ցեղի անունով էլ նրա բնակեցրած տերիտորիան կոչվել է «Գեղաքունիք»[3]։ Գրեթե նույն կարծիքն է հայանում նաև պրոֆեսոր Գր. Ղափանցյանը։ Նա պատմական Սյունիքի հյուսիսային մասում տեղադրում է «դեղ» ցեղը և նշում, որ այդ ցեղի ցեղապետի դղյակ-բերդը կոչվել է «Կիեխունու», որից էլ ծագել է Գեղաքունի պատմական անունը։ Նա բերում է Սևանա լճի ափին Արդիշտի I-ի և Ռուսա I-ի թողած ուրարտական երկու արձանագրություններ, որտեղ հիշատակված են Կիեխունի քաղաքի և երկրի անունները[4]։ Գր. Ղափանցյանի հետազոտությունները ցույց են տալիս, որ հնագույն ժամանակներում Սյունիքում ապրող ցեղերը իրար հետ կապված են եղել դաշնակցային սկզբունքներով և մի քանի անգամ ապստամբել են ուրարտական թագավորների դեմ։

Սյունիք կամ Սիսական տեղանվան, ինչպես նաև Սևորդյաց նախարարական տոհմի, Սևանա լճի ու կղզու անունների ծագումը Ղ. Ալիշանը կապում է Սևուկ իշխանի անվան հետ։ Նա գրում է. «...Հաւանելի և ընդունելի ևս է ինձ միւս աւանդութիւն այլոց պատմչաց, Սեւուկ անուն նահապետ մի լինելոյրմէ և Սեւորդնանցն ազգ, զրակից Սիւնեաց աստ-ուստ թերեւս և անուն կղզոյ ծովուն Գեղամայ Սեւան, և ի սմանէ Սիւնիք՝ իբր Սեւունիք»[5]։ Ա. Գարագաշյանը Սյունիք կամ Սիսական տերմինը կապում է սկյութացիների կամ

---

1 Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 44—45։

2 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 6։

3 Տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 420։

4 Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 109։

5 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 5։

սակերի անվան հետ։ Նա գրում է, թե «գալով Սիսական բառին՝ Պարսիկք յորոց առնուն և Արարացիք՝ Սիսական անուամբ զիմաստային Սակ կամ Շակ կոչուած հին մար-սկիթացի (medoscythe) ցեղի մը երկիրը յարևմտից Կասպից ծովուն։ Ուստի շատ հաւանական է, թէ Սիւնեաց երկիրն, ինչպես նաև մերձակայ նահանգն Արցախու, որ և կոչի ի հին մատենագիրս մեր «Փոքր Սիւնիք», Սիսական և Հարանդ համանուն գաւառներով՝ վաղուց բնակութիւն Լին Շակաց... Այս է, որպէս ասացաք՝ հաւանականապէս Սիւնեաց երկրին, ինչպես նաև Արցախու գաւառին Սիսական կոչուելուն պատճառը...»[6]։ Ն. Ադոնցը ևս Սյունիք և Սիսական անունները կապում է սակերի կամ սկյութացիների անվան հետ[7]։

Հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում Սյունիքի բնակչությունը նույնպես միաձուլվել և իր տեղն է գրավել նոր ձևավորված հայ ժողովրդի կազմում։ Միաձուլման պրոցեսում Սյունյաց իշխանները չեն կորցրել իրենց տոհմական իրավունքները և Արտաշիսյան թագավորության շրջանում, մտնելով տիրող վերնախավի մեջ, պահպանել են նախկին տոհմանունը և երկրամասի Սյունիք կամ Սյունյաց նահանգ անվանումները։

Մ. թ. ա. IV դարում Սյունիքը մտնում էր Աքեմենյան Պարսկաստանին ենթակա Արևելյան Հայաստանի սատրապության մեջ։

Արտաշիսյան թագավորության հիմնումից հետո ականավոր պետական ործիչ Արտաշես I-ը, բարձր գնահատելով Սյունիքի ռազմա-ստրատեգիական նշանակությունը, այդ երկրամասը միավորում է հայկական պետության կազմում և դրանով ապահովում պետության սահմանները՝ հյուսիս-արևելքից ներխուժող ցեղերի ասպատակություններից։ Հավանաբար, Արտաշես I-ը Հայաստանի արևելյան մասում կողմնապահ է նշանակել Սյունյաց իշխանին. այդ երևում է Խորենացու այն հաղորդումից, թե հայոց ավանդական թագավոր Արամը Հայաստանի արևելյան սահմանների պաշտպանությունը հանձնել էր Սիսականի կամ Սյունյաց իշխանին[8]։

Այդ նույն շրջանում Սյունյաց զորագնդերը գրավել են Աղվանքի մի մասը։ Խորենացին հաղորդում է, որ «...զգունդս Սիսական որ ժառանգեաց զգաշտն Աղուանից, և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն՝ որ ասի Հնարակերտ...[9]»։ Ստեփանոս Տարոնեցին ևս գրում է, որ Արտաշիսյան հարստության շրջանում Հայաստանի արևելյան կողմում մղվող պատերազմներին մասնակցել է նաև Սյունյաց զորագունդը, որը գրավել է Աղվանքը[10]։

Սյունիքի և Սյունյաց նախարարության դերը ավելի է մեծանում մ. թ. I դարից սկսած, երբ Հայաստանում հիմնվում է Արշակունիների թագավորությունը։ Այդ ժամանակից ի վեր Սյունյաց իշխանները կարևոր ու առաջնակարգ տեղ են գրավում Արշակունիների արքունիքում։

---

6 Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմութիւն Հայոց. հատ. 1, Թիֆլիս, 1895, էջ 150։

7 Տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 421։

8 Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 46։

9 Նույն տեղում, էջ 106։

10 Տե՛ս Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Փարիզ, 1859, էջ 38։

Ինչպես այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում խոշոր իշխանների դերը և թագավորական արքունիքում բռնած դիրքը որոշվել են նրանց զինվորական հզորությամբ։ Արշակունիների թագավորության շրջանում Հայաստանում ամենից շատ զորք է ունեցել Սյունյաց նախարարությունը։ Ն. Ադոնցի կարծիքով, III—IV դդ. Սյունյաց նախարարությունը ունեցել է 19400 զինվորներից կազմված զորաբանակ[11]։ Մեր կարծիքով, այդ թիվը կարող է որոշ ճշման։ «Աշխարհացույցում» Սյունյաց նախարարության զորքի 19400-ի հիշատակումը առաջացել է նրանից, որ Հայաստանում IV դարում բոլոր նախարարական զորքերը բաժանվել են չորս խոշոր զորաբանակների՝ արևելյան, արևմտյան, հյուսիսային, հարավային։ Արևելյան զորաբանակի մեջ մտել են 21 նախարարությունների զորքերը, որոնց թիվը, ըստ երևույթին, հասել է 19400-ի, և այդ զորաբանակի գլխավոր հրամանատարությունը հանձնվել է Սյունյաց իշխանին։ Դրա հիման վրա էլ սխալմամբ կարծիք են հայտնել, թե Սյունյաց նախարարությունը ունեցել է 19400-անոց բանակ։ Մեզ թվում է, որ Սյունիքի զորքի թիվը եղել է մոտ 10000։ Եթե բոլոր նախարարությունների զորքերի ընդհանուր թիվը հասել է շուրջ 80 հազարի, ապա չէր կարող նրա մոտ 25 տոկոսը լինել միայն Սյունյաց նախարարությունը զորքը։ Հայտնի է, որ IV դարում Հայաստանում բդեշխությունների զորաբանակները 10000-ի չեն հասել, իսկ Արծրունյաց, Բագրատունյաց և Մամիկոնյան հզոր նախարարություններից ամեն մեկը ունեցել է 1000 զինվորից կազմված զորաբանակ։ Ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, Պապ թագավորի գահակալության ժամանակ (368—374) Հայաստանում ամբողջ զորքերի թիվը եղել է 90 հազար[12], որի մեջ մտել են նաև արքունական զորագնդերը։ Այդ փաստը ևս ցույց է տալիս, որ հիշյալ ժամանակաշրջանում Սյունյաց նախարարության զորքերի թիվը չէր կարող հասնել 19400-ի։

Պատմական Սյունիքի, ինչպես նաև Ղարաբաղի ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակությունը Հայաստանի արևելյան սահմանների պաշտպանության գործում հանգամանորեն պարզաբանել է Լեոն[13]։ Արշակունյաց թագավորության հիմնադիր Տրդատ I-ի կողմից հռոմեական նվաճողների դեմ մղված կռիվներում կարևոր դեր են խաղացել Սյունիքի զորագնդերը՝ Տրդատ I-ին հավատարիմ Սյունյաց իշխանների գլխավորությամբ։ Այդ պատճառով էլ, երբ Տրդատ I-ը կարգավորում է պետական, պալատական, զինվորական ապարատը, արքունի զորքերի հրամանատարությունը մի առ ժամանակ հանձնում է Սյունյաց իշխաններին։ Տրդատ I-ը Հայաստանի արևելյան մասի սահմանապահ զորքերի հրամանատարությունը կամ կողմնակալությունը, Արտաշիսյան գահակալների օրինակով, հանձնում է Սյունյաց իշխաններին։ Անդրադառնալով հայոց վաղարշակ թագավորի (իմա՝ Տրդատ I-ի) գործունեությանը, Խորենացին նշում է, թե նա Հայաստանի արևելյան մասի կողմնապահ է նշանակում Սյունյաց իշխանին[14]։ Այդ պատճառով էլ Սյունյաց տանուտեր իշխանը ստացել է «զորագլուխք արևելյան բանակին», գուցե և «երկրորդ արքայից» տիտղոսը։

---

11 Տե՛ս Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 251—252։

12 Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Պետերբուրգ, 1883, էջ 168։

13 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, Երևան, 1946, էջ 493—494։

14 Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 106։

Հռոմեական նվաճողների դեմ մղվող պատերազմի ժամանակ Տրդատ II-ին ևս վճռական օգնություն են ցույց տալիս Սյունյաց իշխանները՝ իրենց զորագնդերով։

Վաղարշակ II-ի թագավորության շրջանում Հայաստանի արևելյան մասի գորքերի հրամանատարն էր Սյունյաց գահակալ իշխան Սիսիանը[15]։

150-ական թթ. Սյունյաց տոհմի տանուտիրական իրավունքը պատկանում էր Բակուր իշխանին։ Ավանդության մեջ հիշատակվող այն փաստը, թե Սյունյաց Բակուր իշխանի հարճ Նազենիկին Տրդատ Բագրատունին խլել, Սպեր է տարել, մեր կարծիքով, աղոտ կերպով ցույց է տալիս II դարում Սյունյաց և Բագրատունյաց նախարարությունների միջև եղած մրցակցության առկայությունը, երբ Բագրատունիները, Արշակունիների արքունիքում Սյունյաց իշխաններից առաջնությունը խլելու ապարդյուն փորձեր էին անում[16]։

Տրդատ III-ի գահակալության շրջանում Հայաստանի արևելյան կողմի գորքերի ընդհանուր հրամանատար Սյունյաց իշխանին ենթարկվում էին 21 նախարարներ՝ իրենց զորագնդերով։

330-ական թթ. Խոսրով II-ի դեմ բռնկված նախարարական կենտրոնախույս շարժումների ժամանակ Սյունյաց իշխանությունը հավատարմորեն ծառայում էր հայկական միասնական Արշակունյաց թագավորությանը։ Սյունյաց տանուտեր իշխան Վաղինակը իր զորագնդերով հաղթական կռիվներ է մղում Աղձնիքի ասպետամբ բդեշխ Բակուրի դեմ և գրավում Աղձնիքը։ Այդ հավատարիմ ծառայության համար Խոսրով II-ը Աղձնիքում բդեշխության պաշտոնը տալիս է Վաղինակ Սյունուն, միաժամանակ վերջինիս հանձնելով նաև Բակուր բդեշխի սիրուհիները։ Իսկ այդ օրինակն դարձնելու նպատակով Խոսրով II-ը Վաղինակ իշխանին ամուսնացնում է Բակուրի դստեր հետ. Սակայն IV դարի II կեսին Աղձնյաց բդեշխության պաշտոնը դուրս է գալիս Սյունյաց իշխանների տնօրինությունից[17]։

Մովսես Խորենացու հաղորդման համաձայն IV դարի I կեսին Հայաստանի արևելյան սահմանները պաշտպանող գորքերի գլխավոր հրամանատարությունը որոշ ժամանակ հանձնվել է Ամատունյաց իշխաններին, բայց նույն դարի կեսերին Արշակունիներն այն կրկին հանձնել են Սյունյաց Վաղինակ իշխանին[18]։

Սյունյաց ականավոր իշխան Անդովկ Սյունին եղել է Մամիկոնյան նախարարների փեսաներից, և երբ հերոսի մահով ընկնում է հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանը ու սովորության համաձայն սպարապետության պաշտոնն անցնում է նրա պատանի որդի Արտավազդ Մամիկոնյանին, վերջինիս խնամակալությունն ստանձնում է Անդովկ Սյունին։

---

15 Հավանաբար Սիսիան իշխանի անվան և հետագայի Սիսիան տեղանվան միջև կոյություն ունի ինչ-որ կապ։

16 Այս կապակցությամբ արժե հիշատակել, որ Պապ թագավորի գահակալության ժամանակ Արշակունիների արքունիքում կարևոր դեր են խաղում Պապի «բևռիները» Սյունյաց իշխանները, որը հաճելի չի եղել Մամիկոնյան իշխաններին. այդ ժամանակ Մամիկոնյան և Սյունյաց նախարարությունները մրցում էին Հայաստանում առաջնություն գրավելու համար։ Պապ թագավորի և Մուշեղ Մամիկոնյանի միջև ծագած թշնամության պատճառներից մեկն էլ պետք է համարել այն, որ Պապը արքունիքում վճռող տեղ էր հատկացրել Սյունյաց իշխաններին։

17 Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 19։

18 Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 275։

Չնայած Սյունյաց նախարարությունն ընդհանրապես հավատարիմ է եղել Արշակունյաց Տիրան թագավորի կենտրոնաձիգ քաղաքականությանը, բայց Սյունյաց իշխաններից Փիսակ Սյունին, դավաճանելով հայրենիքին, անցնում է թշնամու կողմը և, միանալով Ատրպատականի կողմապահ Վարազ Շապուհի զորքերին, կռիվ է մղում Հայաստանի դեմ։

IV դարում Արշակունի թագավորները խնամիական կապ են հաստատում Սյունյաց իշխանության հետ. այսպես, Սյունյաց Անդովկ իշխանի դուստր Փառանձեմը եղել է Արշակ II-ի կինը։

IV դարի II կեսին տեղի ունեցած հայ-պարսկական պատերազմների ժամանակ սասանյան բռնակալության դեմ մղված հաղթական մարտերում բացառիկ խոշոր դեր են խաղացել Սյունյաց զորագնդերը։ 360-ական թթ. երբ սասանյան մեծ բանակը ներխուժում է Հայաստան ու պաշարում Տիզբոնակերտը, վերջինիս հերոսական պաշտպանությունը ղեկավարում էր Անդովկ Սյունին[19]։ Նրա գլխավորությամբ Սյունյաց զորագնդերը սասանյան զորքերին լուրջ հարվածներ են հասցրել նաև Բասենի հաղթական ճակատամարտում։ Փավստոս Բուզանդը Անդովկ Սյունուն անվանում է «իմաստուն մարդ»[20]։ Անդովկ Սյունին, կողմնակից լինելով Բյուզանդիայի հետ դաշինք կնքելուն, գլխավորել է այդ նպատակով Կոստանդնուպոլիս ուղարկված հայկական պատվիրակությունը[21]։ Հայ-բյուզանդական հաջող բանակցություններից հետո Բյուզանդիան պատերազմի մեջ է մտնում Պարսկաստանի դեմ և հաղթանակ տանում։

Փավստոս Բուզանդի վկայությամբ, երբ Արշակ II-ին ասպարեզից վերացնելուց հետո սասանյան զորքերը կրկին ներխուժում են Հայաստան, նրանց համառ դիմադրություն են ցույց տալիս Սյունիքում, որի պատճառով էլ, ժամանակավոր հաղթանակից հետո, երբ սասանյան զորքերը նվաճում են Սյունիքը, այնտեղ կազմակերպվում են զարհուրելի ջարդեր ու ավերածություն։ «Եւ զազգի Սիւնեաց տոհմին զամենայն զայր ի չափ հասեալ կոտորեցին,— հաղորդում է Բուզանդը,— և զկանայս սպանին, և զամենայն մանր մանկտիսն ներքինիս հրամայէր առնել, և խաղացուցանել յերկիրն Պարսից։ Եւ առնէր զայս ամենայն վասն վրիժուցն Անդուկայ...»[22]։

Ստեփանոս Օրբելյանը բերում է պատմական հարուստ դեպքեր պարունակող ժողովրդական բանահյուսության հետևյալ պատումը։ Հայ ականավոր նախարարներին սիրաշահելու նպատակով Շապուհ Երկարակյացը Տիզբոն է հրավիրում նրանց։ Տիզբոնում իր դիրքին համապատասխան չի պատվում Անդովկ Սյունուն։ Վերջինս, զայրացած, Սյունիք վերադառնալով՝ հարմար առիթի է սպասում վրեժ լուծելու գոռոզ Շապուհից։ Եվ երբ արևելքից Պարսկաստանի վրա են արշավում թուշաններն, ու Շապուհը նրանց դեմ պատերազմի է գնում, այդ հարմար պահին իր 1700 հոգուց կազմված զորամասով Անդովկ Սյունին հանկարծ հարձակվում է Տիզբոնի վրա, գրավում արքայական պալատը, թալանում գանձերը և վերադառնում Սյունիք։ Տիզբոն վերադարձած Շապուհ Երկարակյացը մեծ բանակով հարձակվում է Սյունիքի վրա։

19 Տե՛ս նույն տեղում, էջ 287։

20 Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 48։

21 Տե՛ս նույն տեղում, էջ 47։

22 Նույն տեղում, էջ 150։

Թշնամու ներգաղթց ուժերին դիմադրելու հնարավորություն չունենալով, Անդովկ Սյունին Ծղուկից նահանջում է Բաղք ու ամրանում Բաղաբերդում։ Շարունակելով հարձակումը, սասանյան զորքերը առաջ են շարժվում ու պաշարում Բաղաբերդը։ Բերդի պաշտպանները համառորեն դիմադրում են և զգալի կորուստներ պատճառում թշնամուն, բայց ի վերջո, փոխադարձ համաձայնությամբ, 368 թ. Անդովկ Սյունին թողնում է Բաղաբերդը և ընտանիքով տեղափոխվում Բյուզանդիա։ Բյուզանդական կայսրը նրան շնորհում է պատրիկի տիտղոս։ Սասանյան հորդաների կողմից թալանի ու ավերածության ենթարկվելով, Սյունիքը մի առ ժամանակ ենթարկվում է սասանյան բռնակալությանը։ Անդովկ Սյունու որդի Բաբիկ Սյունին Բյուզանդիայում ձեռք է բերում նշանավոր զինվորականի հռչակ։ Հայրենի Սյունյաց գահը գրավելու նպատակով նա Բյուզանդիայից տեղափոխվում է Պարսկաստան և ծառայության մտնում պարսկական բանակում։ 378 թ. նա մենամարտում հաղթում է հոների հռչակված զորավար Հոնադուր իշխանին, որի համար իբրև պարգև Սասանյան արքայից ստանում է Սյունյաց տանուտիրական գահը[23]։

Ժողովրդական այս վեպի մեջ պատմական իրականությունն այն է, որ 360-ական թթ. Սյունիքը հաճախ կռիվներ է մղել սասանյան տիրապետության դեմ և 368 թ. Սյունյաց Անդովկ իշխանը, պարտություն կրելով, յուրայինների հետ տեղափոխվել է Բյուզանդիայի սահմանները։ Իսկ Շապուհ Երկարակյացը սկզբում Արշակունյաց թագավորության ամուր հենարան հանդիսացող Սյունյաց նախարարությանը հալածել է, բայց Արշակ II-ին ընկնելուց հետո աշխատել է իր կողմը գրավել այդ նախարարությունը և վերջինիս զորքը մարտի հանել հոների դեմ։ Այդ նպատակով էլ նա փորձել է սիրաշահել Բաբիկ Սյունուն, նրան ճանաչել է Սյունյաց տանուտեր իշխան, սակայն չի հասել իր նպատակին։

Սյունիքում Բաբիկ Սյունին իշխել է 378—399 թթ. համեմատաբար խաղաղ շրջանում։ Օրբելյանը հաղորդում է, որ Բաբիկը Սյունյաց տանուտիրական գահն ստացել է հայոց թվականությունից 138 տարի առաջ[24]։ Այսպիսով ստացվում է, որ նա Սյունյաց տանուտեր իշխան է դարձել 413 թ., մինչդեռ հայտնի է, որ այդ ժամանակ Սյունիքում իշխել է Վասակ Սյունին։ Օրբելյանը հաղորդում է նաև, որ Բաբիկ Սյունին Սյունյաց տանուտիրական գահը գրավել է Շապուհ Երկարակյացի գահակալության 68-րդ տարում, որը համընկնում է 378 թ. և կառավարել է 21 տարի[25]։ Այսպիսով, կա՞մ Օրբելյանի «Պատմության» վերոհիշյալ դարձվածքը թյուրիմացության արդյունք է, կա՞մ էլ, որ ավելի հավանական է, «Պատմության» արտագրող գրիչները պարզապես «ՃՀԳ (173) տարի» բառերը շփոթել են «ՃԼԸ (138)»-ի հետ։ Այսպիսով, պատմական փաստերի համադրությունը հաստատում է, որ Բաբիկ Սյունին, Հայաստան վերադառնալով, Սյունիքում իշխել է 378—399 թթ.։ Սյունյաց տանուտիրական գահը գրավելուց հետո Բաբիկը միանում է Հայրենիքի անկախության համար մարտնչողների հոսանքին ու կռիվ մղում կենտրոնախույս ուժերի դեմ։ Այդ երևում է Փավստոս Բուզանդի պատմու-

23 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 21—27։

24 Տե՛ս նույն տեղում, էջ 27։

25 Նույն տեղում, էջ 34։

թյան այն հատվածից, որտեղ ասվում է, թե երբ հայրենիքի անկախության համար մարտնչող հոսանքի առաջնորդ սպարապետ Մանվել Մամիկոնյանը մենամարտում է դավաճան Մերուժան Արծրունու դեմ, կատաղի մենամարտի վճռական պահին Մանվել Մամիկոնյանի քաջ զինակից Բաբիկ Սյունին հարձակվում ու նիզակահարելով սպանում է դավաճան Մերուժան Արծրունուն[26]։ Փավստոս Բուզանդի վկայությունից պարզ երևում է, որ Սյունյաց իշխանությունը մաքառել է հայրենիքին դավաճանող ու կենտրոնախույս ուժերի դեմ։

Սյունյաց իշխանությունը հավատարիմ է մնում Արշակունիների թագավորությանը մինչև նրա անկումը։ Արշակ III-ի գահակալության շրջանում, երբ 387 թ. կատարվում է Հայաստանի առաջին բաժանումը, Արևմտյան Հայաստանի թագավոր Արշակ III-ի սպարապետն է եղել Վաղինակ Սյունու որդի Դարա Սյունյաց իշխանը։ Վերջինս զոհվել է Արշակ III-ի և Խոսրով III-ի միջև տեղի ունեցած պատերազմի ժամանակ, Վանանդի Երեվել դաշտի արյունահեղ ճակատամարտում։ Խորենացին հաղորդում է, որ Արշակ III-ի կինը եղել է Սյունյաց Բաբիկ իշխանի դուստրը[27]։ Այդ նույնը կրկնում է նաև Մխիթար Անեցի պատմիչը։

IV դարում Հայաստանի անկախության համար մղվող երկարատև պատերազմներում Սյունյաց զորագնդերի բազմաթիվ սխրագործությունները էլ ավելի են բարձրացնում Սյունիքի դերը Հայաստանում։ Այդ պատճառով էլ Արշակունի թագավորները, իբրև բարձր պատիվ, Սյունյաց գահերեց կամ տանուտեր իշխաններին իրավունք են տվել իրենց գահանիստ պալատում ունենալ արծաթե գահ, ոսկե մական՝ տոհմանվան մակագրությամբ, կրել մարգարտե վարսակալ, վարագաղիր մատանի և հագնել կարմիր կոշիկ։ IV դարում հայ Արշակունիների արքունիքում Սյունյաց նախարարությունը հասնում է «գահերեցության» աստիճանի։ «Դահնամակի» համաձայն, ինչպես հաղորդում է Ուխտանես եպիսկոպոսը, Արշակունիների արքայական պալատում առաջին գահը կամ «բարձր» գրավել է Սյունյաց տանուտեր իշխանը. «Եւ զայլս մի ըստ միոջէ կարգէ և կոչէ անուանս. առաջին՝ Սիւնեաց տէր,— հաղորդում է Ուխտանես եպիսկոպոսը,— երկրորդն ասպետ Բագրատունի, երրորդն՝ Արծրունի, չորրորդն՝ Մաղխազունի, հինգերորդն Մամիկոնեան և զայլս ևս կարգէ և հաստատէ յիւրաքանչիւր իշխանութեանն»[28]։

Հետևաբար անհիմն է Թ. Հակոբյանի այն պնդումը, թե «Սյունյաց նախարարությունը, համեմատած Հայաստանի մյուս նախարարությունների հետ, ավելի կենտրոնախույս էր։ Նա ամեն ապիր օգտագործում էր կենտրոնական պետությունից անջատվելու» (ընդգծումը մերն է.—Տ. Ա.)[29]։

Երբ մահանում է Բաբիկ Սյունին, Սասանյան թագավորը սկզբում որոշում է Սյունյաց տանուտիրական գահը հանձնել Բաբիկ Սյունու որդի, Տիզբոնում որպես պատանդ գտնվող Վասակին։ Բայց երբ այդ նպատակով Սասանյան արքան իր մոտ է հրավիրում Վասակին ու հայտնում, թե վերջինիս է շնորհում Սյունյաց տանուտիրական գահը, Վասակը համարձակորեն հայտ-

26 Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 211—214։

27 Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 313։

28 Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 40։

29 Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 191։

նում է, որ Սյունիքն իր հայրենական ժառանգությունն է և ոչ որ իրավունք չունի այն իրեն շնորհելու։ Ըստ ավանդության նման հանդուգն պատասխանի պատճառով Սասանյան արքան արգելում է Վասակին Սյունիք վերադառնալ ու տիրել Սյունյաց տանուտիրական դահին, որը նա հանձնում է Տիգրոնի արքունիքի կամակատար Սամ Գնթունուն։ Վերջինս, որպես Տիգրոնի արքունիքի դրածո, վարում է հակահայկական քաղաքականություն, որի հետևանքով սյունեցիները հրաժարվում են ընդունել նրա իշխանությունը և երկրում բորբոքվում է ներքին ընդհանուր պայքար։ 401 թ. թունավորվում է Սամ Գնթունին։ Սյունիքի տանուտիրական դահն անցնում է այնյաց Վաղինակ իշխանին (401—410), որի դահակալության շրջանն անցնում է խաղաղ։ Քրիստոնեական կրոնի տարածման ու հաստատման գործում Մեսրոպ Մաշտոցին այստեղ եռանդուն օգնություն է ցույց տալիս հիշյալ Վաղինակ իշխանը։

Այսպիսով, մատենագրական բազմաթիվ տեղեկությունները ապացուցում են, որ ուսումնասիրվող շրջանում Սյունյաց նախարարությունը հիմնականում կապված է եղել Արշակունիների թագավորության հետ և օգնել է վերջինիս հզորացման գործին, կռիվներ մղելով կենտրոնախույս ուժերի և օտար զավթիչների դեմ։

РОЛЬ СЮНИЙСКОГО НАХАРАРСТВА В ПЕРИОД ЦАРСТВОВАНИЯ АРШАКИДОВ

Т. М. СААКЯН

(Резюме)

В статье на основании свидетельств древнеармянских историков сделана попытка показать, что Сюник был одним из княжеств, являвшихся опорой централизованного государства армянских Аршакидов. В IV в. это княжество сыграло важную роль в сохранении независимости Армении в ее борьбе против Сасанидского Ирана.